ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

«Մեկ առողջություն» մոտեցում՝ հանուն դիմակայուն Հայաստանի

World Health Organization
Armenia

Կենսաբազմազանության պահպանումը հանրային առողջությանն ուղղված միջոցառում է. առողջ էկոհամակարգերն օգնում են կանխարգելել հիվանդությունները, ապահովել պարենի ու ջրի հասանելիությունը, նվազեցնել հակամանրէային կայունության (ՀՄԿ) ռիսկերը, նպաստել հոգեկան բարեկեցությանը և ամրապնդել դիմակայունությունը:
Մարդկանց, կենդանիների, բույսերի և նրանց ընդհանուր շրջակա միջավայրի առողջությունը անքակտելիորեն փոխկապակցված են:

~1M Ամբողջ աշխարհում կենդանիների ու բույսերի տեսակներ անհետացման վտանգի տակ են

>60% Նոր ի հայտ եկող վարակները զոոնոզ ծագում ունեն

>75% Աշխարհում պարենային մշակաբույսերի բերքատվությունը կախված է փոշոտողներից

~2/3 Հայաստանում գյուղատնտեսական հողերի 2/3-ը ենթարկվել է դեգրադացիայի

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՈՂ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Առողջությունը «ֆիզիկական, մտավոր և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ է, և ոչ թե պարզապես հիվանդության կամ ֆիզիկական թուլության բացակայություն»:

Կենսաբազմազանությունը «բոլոր աղբյուրներից սերող կենդանի օրգանիզմների փոփոխականությունն է. դա ներառում է բազմազանությունը տեսակների ներսում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը»:

Կենսաբազմազանությունն ընկած է էկոհամակարգի գործունեության և մարդու առողջության ու բարեկեցության համար անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների մատուցման **հիմքում**:

Կենսաբազմազանության և առողջության միջև կապերը դրսևորվում են տարածական և ժամանակային տարբեր մակարդակներում: Կենսաբազմազանությունը և մարդու առողջությունը, ինչպես նաև համապատասխան քաղաքականություններն ու միջոցառումները տարբեր ձևերով փոխկապակցված են:

Կենսաբազմազանության կորստի **շարժիչ գործոններն** են հողերի նշանակության փոփոխությունը, բնակավայրերի կորուստը, գերշահագործումը, աղտոտումը, ինվազիվ տեսակները և կլիմայի փոփոխությունը: Այս գործոններից շատերն ազդում են մարդու առողջության և կենսաբազմազանության վրա:

Կանայք և տղամարդիկ տարբեր դերակատարություն ունեն կենսաբազմազանության պահպանման և օգտագործման մեջ, և դրանց ազդեցությունը նրանց առողջության վրա տարբեր է:

Բնակչության առողջությունը մեծապես որոշվում է սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գործոններով:

Սոցիալական և բնական գիտությունները կարևոր ներդրում ունեն կենսաբազմազանության և առողջության ոլորտներում հետազոտությունների և քաղաքականության գործում: Ինտեգրացված մոտեցումները, ինչպիսին է «Մեկ առողջությունը», միավորում են տարբեր ոլորտներ և պահանջում են փոխըմբռնման և համագործակցության զարգացում:

ԻՆՉՈՒ Է ԴԱ ԿԱՐԵՎՈՐ

1 Հիվանդությունների կանխարգելում
Կենսաբազմազանության կորուստը և բնակավայրերի խաթարումը մեծացնում են զոոնոզ և փոխանցողներով պայմանավորված հիվանդությունների ռիսկը:

2 Սննդամթերք և սնուցում
Փոշոտումը, հողերի առողջությունը և գենետիկ բազմազանությունը պահպանում են սննդամթերքի արտադրության դիմակայուն, սննդարար պարենային համակարգերը:

3 Ջուր և աղտոտում
Դեգրադացված էկոհամակարգերը մեծացնում են աղտոտվածությունը և ջրի հետ կապված հիվանդությունների ռիսկերը:

4 ՀՄԿ կանխարգելում
Աղտոտումը և էկոհամակարգերի խաթարումը կարող են նպաստել կայուն օրգանիզմների և ՀՄԿ մնացորդների առաջացմանը:

5 Հոգեկան բարեկեցություն
Կենսաբազմազան միջավայրերը նպաստում են հանգստին, վերականգնմանը և հոգեբանական առողջությանը:

ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

կապում է մարդու, կենդանիների, բույսերի և էկոհամակարգերի առողջությունը՝ համակարգված կանխարգելման, համաճարակաբանական դիտարկման և գործողությունների միջոցով:

Կանխարգելել՝ Զոոնոզ և փոխանցողներով պայմանավորված հիվանդություններ
Հայտնաբերել՝ Համալիր համաճարակաբանական դիտարկում և վաղ նախազգուշացում
Պաշտպանել՝ Պարենային անվտանգություն, կենսաապահովություն և ջրի որակ
Հարմարվել՝ Կլիմայական դիմակայունություն և շրջակա միջավայրի մոնիթորինգ
Համակարգել՝ Առողջություն, շրջակա միջավայր, գյուղատնտեսություն

ԱՐԴՅՈՒՆՔ՝ ավելի դիմակայուն առողջապահական համակարգեր, ավելի լավ պատրաստվածություն համավարակներին և ավելի առողջ էկոհամակարգեր:

ԻՆՉ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆ ԴԱ ՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

• Կենսաբազմազանության թեժ կետ
Հաաստանը գտնվում է Կովկասի կենսաբազմազանության թեժ կետում՝ հարուստ, բայց վտանգված էկոհամակարգերով:

• Աճող ճնշում
Հողի դեգրադացումը, ջերմաստիճանի բարձրացումը, երաշտը, անտառային հրդեհների ռիսկը, աղտոտումը և կենսամիջավայրերի մասնատվածությունը սպառնում են առողջությանը և կենսամիջոցներին:

• Միջոլորտային ռիսկեր
Ջրի որակը, կենդանիների հիվանդությունները և ՀՄԿ-ն կապում են շրջակա միջավայրը, գյուղատնտեսությունը և առողջապահությունը:

• COP1-ի հնարավորությունները
Որպես COP17 համաժողովը հյուրընկալող երկիր՝ Հայաստանը կարող է ընդգծել և վերահաստատել կենսաբազմազանության ու առողջության կապը և նպաստել Մեկ առողջության ներդրմանը:

1 Կառավարում
Ամրապնդել միջոլորտային համակարգումն ու հաշվետվողականությունը:

2 Համաճարակաբանական դիտարկում
Ընդլայնել զոոնոզ հիվանդությունների, շրջակա միջավայրի և ՀՄԿ-ի ինտեգրացված համաճարակաբանական դիտարկումը:

3 Քաղաքականությունների ինտեգրում
Առողջությունը ներառել կենսաբազմազանության, հողի, ջրի և կլիմայի, իսկ կենսաբազմազանությունը՝ առողջության և սնուցման մասին քաղաքականությունների մեջ:

4 Հետազոտություն
Ներդրումներ կատարել բազմամասնագիտական հետազոտությունների, նորարարության և թվային գործիքների մեջ:

5 Համայնքներ
Բարձրացնել իրազեկվածությունը, իրականացնել կանխարգելմանը և շրջակա միջավայրի պահպանություն-առողջություն կապին ուղղված համայնքահեն գործողություններ:

6 Գործընկերություն և ֆինանսավորում
Մոբիլիզացնել գործընկերությունն ու կայուն ֆինանսավորումը. Հայաստանը դիրքավորել որպես Մեկ առողջության համագործակցության և նորարարության տարածաշրջանային հարթակ՝ COP17-ին և հետո:

Աղբյուրը՝ Thematic Brief - Biodiversity and Health: A One Health Approach towards a Resilient Society (31 Aug 2026)